# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**__________________ 2019 թվականի N –Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 895-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 895-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Որոշման՝ վերնագրում և ամբողջ տեքստում (այդ թվում՝ նաև հավելվածներում) «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» բառերը փոխարինել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական» բառերը փոխարինել «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության» բառերով.
- որոշման N 1 հավելվածի 11-րդ կետում «զոհվածի վերջին բնակության վայրի» բառերը փոխարինել «ցանկացած» բառով.
- որոշման N 2 հավելվածում՝

ա. 3-րդ և 6-րդ կետերից հանել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը.

բ. 4-րդ կետում «և 5.1-ին» բառերը փոխարինել «, 5.1-ին, 5.2-րդ և 5.3-րդ» բառերով, իսկ «քննչական կոմիտեի ծառայողի» բառերից հետո լրացնել «, հարկային ծառայության քննիչի, մաքսային ծառայության քննիչի» բառերը.

գ. 8-րդ կետից հանել «, ինչպես նաև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 2 հավելվածով սահմանված՝ դատախազի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածները» բառերը և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքով նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկելու համար մինչև այդ մասի 1-4-րդ կետերում նշված որևէ պաշտոն առաջին անգամ զբաղեցնելը աշխատած և մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառվող ժամանակահատվածներում հաշվառվում են նաև «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամանակահատվածները:».

- որոշման N 3 հավելվածում՝

ա. 2-րդ կետի 3-րդ ենթակետում □1-ին և 8-րդ կետերով□ բառերը փոխարինել □8-րդ կետով□ բառերով.

բ. 11-րդ կետի 1-ին ենթակետում «6-րդ, 7-րդ և 8-րդ» բառերը փոխարինել «2.2-րդ, 2.3-րդ, 6-րդ, 7-րդ, 7.1-ին և 8-րդ» բառերով.

գ. 13-րդ, 14-րդ և 24-րդ կետերում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերը փոխարինել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով.

դ. 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը 2018 թվականի ապրիլի 9-ին և դրանից հետո դադարում է պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում՝ այդ պաշտոնը զբաղեցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:».

ե. 18-րդ կետից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 18.1-ին կետով.

«18.1. Եթե օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հիմքերով կենսաթոշակը նշանակվել է մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը և այդ օրվա դրությամբ անձը կատարել է գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանք, ապա նրա կենսաթոշակը շարունակում է վճարվել: Սույն կարգի 18-րդ կետի դրույթները տարածվում են այդ անձի՝ 2018 թվականի ապրիլի 9-ից հետո հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում:».

զ. 21-րդ կետում «աշխատանքային պայմանագիրը լուծելուց, պետական և համայնքային պաշտոնից, նոտարի պաշտոնից ազատվելուց, որպես անհատ ձեռնարկատեր՝ հաշվառումից հանվելուց» բառերը փոխարինել «հանրային պաշտոնից կամ հանրային ծառայության պաշտոնից ազատվելուց,» բառերով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Այս դեպքում Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքով նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունքը վերականգնելիս մասնագիտական ստաժը և կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է այդ մասով սահմանված կարգով՝ հաշվի առնելով անձի զբաղեցրած վերջին պաշտոնը և այդ պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունեցած մասնագիտական ստաժը:».

է. 24-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-ին կետ.

«24.1. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով մինչև 2019 թվականի հուլիսի 18-ը նշանակված կենսաթոշակները վերահաշվարկվում են կենսաթոշակառուի գրավոր դիմումի և ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն կենսաթոշակ նշանակելու օրվա դրությամբ ունի օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված կենսաթոշակի իրավունք բավարարում է օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված պահանջները:».

ը. 29-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «թաղման նպաստ նշանակելու և վճարելու համար» բառերով, իսկ «տարածքային բաժին» բառերից առաջ լրացնել «ցանկացած» բառով.

- որոշման N 4 հավելվածի՝

ա. 1-ին կետում «պաշտոն զբաղեցրած անձին և հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձին» բառերը փոխարինել «, հարկային ծառայության քննիչի, մաքսային ծառայության քննիչի, հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձանց» բառերով,

բ. 2-րդ և 7-րդ կետերում «ութերորդ» բառը փոխարինել «երկրորդ» բառով.

գ. 8-րդ կետի 2-րդ ենթակետում «տեղակալի» բառից հետո լրացնել «, վարչության պետի» բառերը.

դ. 8-րդ կետի 3-րդ ենթակետում «ավագ քննիչի» բառերից հետո լրացնել «, վարչության պետի տեղակալի» բառերը.

ե. 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով.

«12. Հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հարկային կամ մաքսային ծառայության քննիչի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (հարկային ծառայության քննիչի համար՝ պաշտոնային դրույքաչափի, հարկային ծառայության դասային աստիճանի և հատուկ կոչումի համար տրվող հավելավճարների հանրագումարի, մաքսային ծառայության քննիչի համար՝ պաշտոնային դրույքաչափի, մաքսային ծառայության հատուկ կոչումի համար տրվող հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝

հաշվի առնելով վերջին պաշտոնը, հատուկ կոչումը (հարկային ծառայության քննիչի դեպքում՝ նաև վերջին դասային աստիճանը) հարկային կամ մաքսային ծառայության քննիչի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

13. Հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի՝ մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի չափը որոշելու համար սահմանվում է՝

1) հարկային ծառայության քննիչի և մաքսային ծառայության քննիչի բազային պաշտոնային դրույքաչափը՝ 55,500.0 դրամ.

2) պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները՝

ա. վերադաս հարկային մարմնի հատկապես կարևորագույն գործերով քննիչ, վերադաս հարկային մարմնի ավագ քննիչ՝ 4.27,

բ. վերադաս հարկային մարմնի քննիչ՝ 3.72.

գ. վերադաս մաքսային մարմնի հատկապես կարևորագույն գործերով քննիչ, վերադաս մաքսային մարմնի ավագ քննիչ՝ 4.27,

դ. վերադաս մաքսային մարմնի քննիչ՝ 3.25,

3) հարկային ծառայության դասային աստիճանի և հատուկ կոչումի համար հավելավճարը՝ բազային պաշտոնային դրույքաչափի նկատմամբ՝ հետևյալ չափերով.

ա. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական, Հարկային ծառայության գնդապետ՝ 28%,

բ. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական, Հարկային ծառայության փոխգնդապետ՝ 24%,

գ. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական, Հարկային ծառայության մայոր՝ 20%,

դ. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական, Հարկային ծառայության կապիտան՝ 16%,

ե. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական, Հարկային ծառայության ավագ լեյտենանտ՝ 13%,

զ. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական, Հարկային ծառայության լեյտենանտ՝ 10%,

4) մաքսային ծառայության քննիչի հատուկ կոչումի համար հավելավճարը՝ բազային պաշտոնային դրույքաչափի նկատմամբ՝ հետևյալ չափերով.

ա. մաքսային ծառայության գեներալ-մայոր՝ 32%,

բ. մաքսային ծառայության գնդապետ՝ 29%,

գ. մաքսային ծառայության փոխգնդապետ՝ 26%,

դ. մաքսային ծառայության մայոր ՝ 23%,

ե. մաքսային ծառայության կապիտան՝ 16%,

զ. մաքսային ծառայության ավագ լեյտենանտ՝ 15%,

է. մաքսային ծառայության լեյտենանտ՝ 13%,

ը. մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտ՝ 11%:

14. Հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի՝ մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի չափը որոշվում է՝ բազային պաշտոնային դրույքաչափի և համապատասխան պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի արտադրյալի և հավելավճարի հաշվարկված բազային պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հարկային ծառայության դասային աստիճանի և հատուկ կոչումի համար կամ մաքսային ծառայողի հատուկ կոչումի համար, համապատասխանաբար, սույն կարգի 13-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված տոկոսի կիրառմամբ հանրագումարի չափով:
15. Հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է ՀԱ=(ԲՊԴxԳ+ԲՊԴxՀ)-29280-(ԲՊԴxԳ+ԲՊԴxՀ -120000)x0.26 բանաձևով, որտեղ՝

1) ՀԱ-ն հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափն է.

2) ԲՊԴ-ն՝  սույն կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված բազային պաշտոնային դրույքաչափն է.

3) Գ-ն՝ հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ զբաղեցրած պաշտոնին համապատասխանող՝ սույն կարգի 13-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցն է.

4) Հ-ն՝ հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ նրա ունեցած հարկային ծառայության դասային աստիճանի և հատուկ կոչումին կամ մաքսային ծառայողի հատուկ կոչումին համապատասխանող՝ սույն կարգի 13-րդ կետի 3-րդ կամ 13-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված հավելավճարի տոկոսային չափն է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: